ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

1. Թափուր պաշտոնի անվանումը՝

Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-2)

Թափուր պաշտոնն առաջացել է 2024 թվականի օգոստոսի 01-ին «Համայնքային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

Թափուր պաշտոնի անձնագիրը և մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը ներկայացված են հետևյալ հղումով՝ https://jrvezh.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1898:

Մրցույթին մասնակցելու համար դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք բնօրինակների հետ միասին, պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում (Ձև 1),
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի, իսկ փախստականի դեպքում՝ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն,
3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմ) պատճեն, ինչպես նաև պետք է ներառված լինի գնումների որակավորում ունեցող մասնագետների ցանկում,
4) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն,
5) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բոլոր լրացված էջերով,
6) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
7) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը,
8) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
9) հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,
10) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին:

2. Թափուր պաշտոնի անվանումը՝

Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-5)

Թափուր պաշտոնն առաջացել է 2024 թվականի հուլիսի 9-ին, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի N 340-Ա հրամանում» լրացումներ կատարելու մասին N 1513-Ահրամանի հիմքով:

Թափուր պաշտոնի անձնագիրը և մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը ներկայացված են հետևյալ հղումով՝ https://jrvezh.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1898:

Մրցույթին մասնակցելու համար դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք բնօրինակների հետ միասին, պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում (Ձև 1),
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի, իսկ փախստականի դեպքում՝ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն,
3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմ) պատճեն,
4) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն,
5) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բոլոր լրացված էջերով,
6) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

7) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը,

8) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

9) հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

10) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին:

Դիմումը լրացնելու ժամանակ ներկայացված՝ անձը հաստատող, կրթությունը, զինվորական ծառայության հետ առնչությունը, աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են դիմողին՝ դիմումն ընդունելուց հետո:

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 329 000 (երեք հարյուր քսանինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **2026 թվականի սեպտեմբերի 07-ը**:

Մրցույթը կկայանա 2026 թվականի **սեպտեմբերի 17-ին, ժամը 12:00-ին Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76, հեռախոս՝ 010-684929, 060-535553):**

Փաստաթղթերն ընդունվում են **Ջրվեժի համայնքապետարանի** աշխատակազմում (**համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76, հեռախոս՝ 010-684929, 060-535553,** էլ. հասցե jrvezh.kotayk@gmail.com) կամ **Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունում** (ք. Հրազդան, հեռախոս 0223-2-73-01, էլ. հասցե kotayq@mta.gov.am)**, ժամը 9:00-ից մինչև 18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**